**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ**
**ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

05 մայիսի 2026 թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Վարդանյանը, Ծովինար Հովհաննիսյանը, Եղիշե Նազարյանը, Թամարա Մկրտչյանը, Մուշեղ Ներսիսյանը, Սամվել Ոսկանյանը, Կարեն Մանասերյանը, Մարատ Շահբազյանը, Տիգրան Նազարյանը և Վահե Վարդանյանը:

**Ավագանու նիստին մասնակցում էին՝**

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալի օգնական Սամվել Օրդոյանը, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Գառնիկ Խաչատրյանը և համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Հայկանուշ Ավագյանը:

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը**

**Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը**

**ԼՍԵՑԻՆ.**

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու թիվ 9 նստաշրջանի չորրորդ՝ 2026 թվականի մայիսի 5-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2026 թվականի մայիսի 5-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Եղեգնաձոր համայնքի ավագանու շահերը Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում ներկայացնելու համար լիազորություններ վերապահելու մասին:

3) Եղեգնաձոր համայնքի 2026 թվականի բյուջեում վերաբաշխում կատարելու մասին:

4) Տեղական վճարի գծով արտոնություն սահմանելու մասին:

5) Համայնքային սեփականություն հանդիսացող 15 հա արոտավայրը պարզ գրավոր ձևով վարձակալության տրամադրելու համար համաձայնություն տալու մասին:

6) Տրանսպորտային միջոցների վարձակալության պայմանագրերը վաղաժամկետ լուծելու մասին:

7) Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող հողատեսքերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

8) Դպրոցական «Վերջին զանգ» միջոցառմանը աջակցելու համար թույլտվություն տալու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 52-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ.</u>**

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՇԱՀԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ԳԱՌՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ և 24-րդ հոդվածներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. ՀՀ վարչական դատարանի վարույթում քննվող թիվ ՎԴ/15269/05/25 վարչական գործով, ըստ հայցի «ՄԵՏԱ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի ընդդեմ Եղեգնաձորի համայնքի ավագանու՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ավագանուն Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում «Մետա Գոլդ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող Գլաձորի բազմամետաղային հանքավայրի տարածքում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ուսումնասիրության աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ համաձայնություն տալու վերաբերյալ որոշում կայացնելուն պարտավորեցնելու և ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ավագանու 14.08.2025 թվականի թիվ 110-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, Եղեգնաձոր համայնքի ավագանու շահերը ներկայացնելու համար լիազորել ՀՀ Փաստաբանների պալատի փաստաբաններ՝

1) Կարեն Էդուարդի Քալանթարյանին (փաստաբանական գործունեության արտոնագիր արտոնագիր թիվ 909)

2) Գուրգեն Ռոդիսլավի Թորոսյանին (փաստաբանական գործունեության արտոնագիր թիվ 1026):

2. Սույն որոշման առաջին կետով լիազորված անձինք լիազորվում են լինելու Եղեգնաձոր համայնքի ավագանու ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետության վարչական, Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարաններում և Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատում, կատարելու Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածով նշված բոլոր դատավարական գործողությունները, ներկայացնելու և ստանալու ապացույցներ, դատավարական փաստաթղթեր, հայցադիմումի պատասխան և վերը նշված վարչական գործի հետ կապված անհրաժեշտ այլ դատավարական գործողություններ:

3. Լիազորագիրը տրվում է 3 (երեք) տարի ժամկետով, առանց վերալիազորման իրավունքի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 53-Ա)*

**ԼՍԵՑԻՆ.**

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ և 33-րդ հոդվածի 4-րդ մասերի պահանջներով՝ **ավագանին որոշեց**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2026 թվականի հունվարի 7-ի թիվ 03-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարել հետևյալ վերաբաշխումը.

Պակասեցնել՝ գործառնական դասակարգման 11.01.02 (պահուստային ֆոնդ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածից 4 000 000 (չորս միլիոն) ՀՀ դրամ և այն ավելացնել՝ գործառնական դասակարգման բաժին 01 խումբ 01 դաս 01 (օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4222 (արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր) հոդվածին՝ Լեհաստանի Չեխանովեց քաղաք Եղեգնաձոր համայնքի պատվիրականության գործուղման ծախսերը հոգալու նպատակով:

2. Թույլատրել սույն որոշման առաջին կետում նշված գումարն ամբողջությամբ փոխանցելու Եղեգնաձորի համայնքապետարանին պատկանող ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի VIZA բանկային քարտին, գործուղման վերաբերյալ հաշվետվություններն ընդունել համաձայն նշված քարտով իրականացված ծախսերի վերաբերյալ համապատասխան անդորրագրերի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 54-Ն)*

**ԼՍԵՑԻՆ.**

***ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով, քննարկելով «Եղեգնաձորի թիվ 2 մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի դիմումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. «Եղեգնաձորի թիվ 2 մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ավագ խմբի սան Գրիգոր Գևորգի Խաչատրյանի ծնողական վճարի (տեղական վճար) նկատմամբ սահմանել արտոնություն՝ զրոյական դրույքաչափի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 55-Ա)*

**ԼՍԵՑԻՆ.**

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 15 ՀԱ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՊԱՐԶ ԳՐԱՎՈՐ ՁԵՎՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշումը և քաղաքացի Մրազ Սլոյի Համզոյանի դիմումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Տալ համաձայնություն Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող («Սանդուքար» հանդամաս), համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայրերից 15 հա, 1 (մեկ) ամիս ժամկետով (06.05.2026-06.06.2026թթ.), պարզ գրավոր ձևով քաղաքացի Մրազ Սլոյի Համզոյանին վարձակալության տրամադրելու համար:

2. 15 հա արոտավայրի 1 (մեկ) ամսվա վարձավճարը սահմանել 18 000 (տասնութ հազար) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 56-Ա)*

**ԼՍԵՑԻՆ.**

***ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԳԱՌՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 102-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասով, քննարկելով Ջերմուկ համայնքի ղեկավարի և «ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի տնօրենի դիմումները՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Վաղաժամկետ լուծել 2025 թվականի սեպտեմբերի 30-ին Եղեգնաձորի համայնքապետարանի և՝

1) «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի միջև կնքված գույքի (տրանսպորտային միջոց) վարձակալության 01/25ՏՄ պայմանագիրը.

2) «ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի միջև կնքված գույքի (տրանսպորտային միջոց) վարձակալության 02/25ՏՄ պայմանագիրը:

2. Պայմանագրերի վերջնաժամկետ սահմանել սույն որոշման առաջին կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված կազմակերպությունների կողմից ներկայացված դիմումներում նշված ժամկետները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 57-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ.</u>**

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՍԱՄՎԵԼ ՕՐԴՈՅԱՆ)***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության ներքոնշյալ հողատեսքերը ճանաչել որպես համայնքային սեփականություն՝

1) 6.94099 հա մակերեսով, որից՝ 0.063023 հա այլ հողատեսք, և 6.877967 հա վարելահող (կադաստրային ծածկագիր՝ 10-001-0360-ից).

2) 0.60903 հա մակերեսով վարելահող (կադաստրային ծածկագիր՝ 10-001-0360-0000-ից).

3) 0.25152 հա մակերեսով վարելահող (կադաստրային ծածկագիր՝ 10-001-0360-0015-ից).

4) 0.23064 հա մակերեսով վարելահող (կադաստրային ծածկագիր՝ 10-001-0360-0103-ից).

5) 0.24301 հա մակերեսով վարելահող (կադաստրային ծածկագիր՝ 10-001-0360-0073-ից):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 58-Ա)*

**ԼՍԵՑԻՆ.**

***ԴՊՐՈՑԱԿԱՆ «ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 42-րդ կետերով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Թույլատրել Եղեգնաձոր համայնքի 2026 թվականի բյուջեի 08.02.04 (այլ մշակութային կազմակերպություններ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4727 (կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից) հոդվածով նախատեսված գումարից 450 000 (չորս հարյուր հիսուն հազար) դրամ հատկացնել Եղեգնաձոր համայնքում գործող թվով 6 դպրոցների 9 ավարտական 12-րդ դասարանների վերջին զանգի միջոցառմանն աջակցելու նպատակով, յուրաքանչյուր դասարանին՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 59-Ա)*

**ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ ____________

ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ ____________

ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ ____________

ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆ ____________

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ ____________

ԾՈՎԻՆԱՐ ՍԱՐԳՍՅԱՆ ____________

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ ____________

ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ____________

ՌՈՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ ____________

ՍՈՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ ____________

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ____________

*Նիստն արձանագրեց*՝ Մարինե Հովհաննիսյանը

____________